

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ՆՏ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՆԻՄԱՆ ՎՐԱ՝ ՆՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 55 ՆՈՂՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ 5-ՐԴ ԿԵՏԻ, «ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՅԿԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ» ՆՏ ՕՐԵՆՔԻ 1-ԻՆ ՆՈՂՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ, «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՆՏ ՕՐԵՆՔԻ 2 ՆՈՂՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

27 հոկտեմբերի 2009թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոյությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի (զեկուցող), Վ. Նովիաննիսյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն ՆՏ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի, 101 հոդվածի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 25 եւ 71 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՆՏ վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, «Նայասարանի Նանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՏ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասի, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՆՏ օրենքի 2 հոդվածի 4-րդ մասի՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՆՏ վարչական դատարանի՝ 30.07.2009թ. սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, դատական գործը, հերազոտելով ՆՏ քրեական դատավարության օրենսգիրքը, «Նայասարանի Նանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՏ օրենքը, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՆՏ օրենքը եւ գործում առկա մյուս

փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը
Պ Ա Ր Զ Ե Ց .

1. ՆՏ քրեական դատավարության օրենսգիրքն ընդունվել է ՆՏ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի հուլիսի 1-ին, Նայասպանի Նանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից: «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՆՏ օրենքը ՆՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004թ. փետրվարի 18-ին, ՆՏ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2004թ. մարտի 16-ին եւ ուժի մեջ է մտել 2004թ. դեկտեմբերի 31-ից: «Նայասպանի Նանրապետությունում սպուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՏ օրենքը ՆՏ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2000թ. մայիսի 17-ին, ՆՏ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2000թ. հունիսի 12-ին եւ ուժի մեջ է մտել 2000թ. հուլիսի 1-ից:

2. ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետում ամրագրված նորմը քննիչին լիազորում է «պահանջել կատարելու վերսպուգումներ, գույքագրումներ, այլ սպուգողական գործողություններ»:

«Նայասպանի Նանրապետությունում սպուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՏ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասում ամրագրված է. «Սույն օրենքը չի կարգավորում Նայասպանի Նանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերի, ինչպես նաեւ Նայասպանի Նանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզիա ստացած անձանց գործունեության նկատմամբ իրականացվող վերսպուգումների, Նայասպանի Նանրապետության վերահսկիչ պալատի կողմից իրականացվող վերահսկողության, Նայասպանի Նանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան իրականացվող սպուգումների նշանակման եւ անցկացման, Նայասպանի Նանրապետության մաքսային օրենսգրքով նախատեսված մաքսային հսկողության (բացառությամբ հեքրացթողումային հսկողության), հողերի օգտագործման ու պահպանման նկատմամբ վերահսկողության հետ կապված հարաբերությունները, փոխադարձ սուբյեկտի գործադիր մարմնի նկատմամբ բաժնետերերի, փայտերերի, հիմնադիրների կամ անդամների կողմից իրականացվող հսկողության հետ կապված հարաբերությունները, ինչպես նաեւ փոխադարձ սուբյեկտի փարածքային ու կառուցվածքային ստորաբաժանումների նկատմամբ փոխադարձ սուբյեկտի

գործադիր մարմնի կողմից իրականացվող հսկողության հետ կապված հարաբերությունները»:

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՆՏ օրենքի 2 հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Սույն օրենքի գործողությունը չի փարսվում դադարվարական իրավունքի նորմերով կարգավորվող հարաբերությունների վրա»:

3. Գործի դադարվարական նախապարմությունը հետեւյալն է: ՆՏ վարչական դատարանն իր՝ 2008թ. հոկտեմբերի 8-ի վճռով մերժել է ՆՏ գլխավոր դատախազության հայցը՝ վիճելի իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելով «Նայաստանի Նանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՏ օրենքը, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՆՏ օրենքը: ՆՏ վարչական դատարանի նշված վճիռը բողոքարկվել է ՆՏ վճռաբեկ դատարան: Վերջինս իր՝ 13.03.2009թ. ՎԴ/0216/05/08 որոշմամբ բեկանել է ՆՏ վարչական դատարանի բողոքարկված վճիռը եւ գործն ուղարկել նոր քննության: Վճռաբեկ դատարանը նշված որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ քրեական դադարվարության օրենսգրքին համապատասխան իրականացվող ստուգումների նշանակման եւ անցկացման հետ կապված հարաբերությունները դուրս են «Նայաստանի Նանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՏ օրենքի, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՆՏ օրենքի իրավակարգավորման շրջանակից: Վճռաբեկ դատարանը, մասնավորապես, նշել է, որ. ««Նայաստանի Նանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՏ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասի եւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՆՏ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով վերոնշյալ օրենքները սույն վեճի լուծման համար կիրառելի չեն»:

4. Դիմող կողմը սահմանադրական դատարանին ուղղված դիմումում խնդրում է քննության առնել ՆՏ քրեական դադարվարության օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, «Նայաստանի Նանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՏ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասի, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՆՏ օրենքի 2 հոդվածի 4-րդ մասի՝ «իրավակիրառ պրակտիկայում Կրված մեկնաբանման, այն է՝ քրեական դադարվարության կարգով նշանակվող ստուգումները դուրս են «Նայաստանի

Նանրապետությունում սպուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՆ օրենքի եւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՆՆ օրենքի կարգավորման առարկայից, Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանելու հարցը»:

Դիմողը՝ վկայակոչելով ՆՆ Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ մասը, գրնում է, որ իրավաբանական անձանց, ձեռնարկափրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն (այդ թվում՝ սպուգումներ) իրականացնելու պայմանները եւ կարգը, այդ թվում ՆՆ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան իրականացվող սպուգումների իրականացման պայմաններն ու կարգը պետք է սահմանվեն օրենքով: Եթե ՆՆ քրեական դատավարության օրենսգրքով այդ պայմաններն ու կարգը սահմանված չեն, իսկ «Նայասրանի Նանրապետությունում սպուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՆ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասը բացառում է նշված օրենքի կանոնակարգումների կիրառելիությունը, ապա ակնհայտ է, որ պետք է լինի օրենք, որպեսզի նշված սպուգումներն իրականացվեն դրան համապատասխան: ՆՆ քրեական դատավարության օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը միայն սահմանում է իրավասու պաշտոնատար անձի լիազորությունը պահանջելու «սպուգողական գործողություններ», իսկ այդ սպուգողական գործողությունների իրականացման պայմաններն ու կարգը ՆՆ քրեական դատավարության օրենսգրքով չի կանոնակարգվում: ՆՆ քրեական դատավարության շրջանակներում նշանակվող սպուգումները կանոնակարգող հատուկ օրենքի բացակայության պայմաններում, ըստ դիմողի՝ ՆՆ քրեական դատավարության օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի՝ իրավակիրառ պրակտիկայում փրված մեկնաբանությունն առաջացնում է վիճարկվող նորմերի սահմանադրականության հարց՝ կապված ՆՆ Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ մասի պահանջների հետ:

5. Պատասխանող կողմը նշում է, որ ՆՆ վարչական դատարանը դիմել է ՆՆ սահմանադրական դատարան ոչ թե վիճարկվող դրույթների, այլ իրավակիրառ պրակտիկայում դրանց փրված մեկնաբանության սահմանադրականության հարցով:

Պատասխանող կողմը միաժամանակ նշում է, որ քրեական դատավարության ընթացակարգով նշանակված սպուգումների դեպքում անձը գրկված չէ ինչպես իր իրավունքների եւ շահերի պաշտպանության հնարավորությունից, այնպես էլ սպուգում իրականացնող մարմինների կամայական գործողություններից: Օրենքով

սահմանված են նաեւ այն անձանց իրավունքներն ու պարտականությունները, ում մոտ իրականացվում են սպուգումներ: ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածը հնարավորություն է տալիս բողոքարկել քննիչի համապարասխան որոշումը:

Այն օրենսդրական բացի առնչությամբ, որ քրեական դատավարության օրենսգրքին համապարասխան իրականացվող սպուգումների անցկացման պայմաններն ու կարգը պետք է սահմանվեն օրենքով, պարասխանողը նշում է, որ ՆՏ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունվել է խնդրո առարկային վերաբերող «Նայասարանի Նանրապետությունում սպուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՏ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՆՏ օրենքի նախագիծը:

6. ՆՏ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 71 հոդվածի համաձայն դատարանները հանդիսանում են կոնկրետ սահմանադրական վերահսկողության սուբյեկտ: Դատարանների դիմումների հիման վրա կոնկրետ վերահսկողության նպատակն է կանխել դատարանի կողմից կոնկրետ վեճի լուծումը ենթադրյալ հակասահմանադրական օրենքի հիման վրա: Ըստ այդմ, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 71 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանները կարող են սահմանադրական դատարանում վիճարկել ՆՏ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված այն իրավական ակտերի սահմանադրականությունը, որոնք **ենթակա են կիրառման իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով**: Այլապես, դատարանների դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ սահմանադրական վերահսկողությունը չի ծառայի իր հիմնական նպատակին:

Գործի քննությունը վկայում է, որ վարչական դատարանի կողմից վիճարկվող՝ «Նայասարանի Նանրապետությունում սպուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՏ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասի եւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՆՏ օրենքի 2 հոդվածի 4-րդ մասի դրույթները վարչական դատարանի կողմից տվյալ գործով նոր քննության վարույթում կիրառման ենթակա օրինադրույթներ չեն: Մասնավորապես, այս հանգամանքը հավաստվում է ՆՏ վճռաբեկ դատարանի՝ 13.03.2009թ. ՎԴ/0216/05/08 որոշմամբ, որով վճռաբեկ դատարանը ՆՏ վարչական դատարանի վճիռը բեկանել է եւ գործն ուղարկել նոր

քննության այն հիմնական հիմնավորմամբ, որ վարչական դատարանի կողմից վիճարկվող վերոհիշյալ օրինադրությունները փոխառված են:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՏՏ վարչական դատարանի վարչության օրենսգրքի 122 հոդվածը սահմանում է, որ վարչական դատարանում գործի նոր քննությունն իրականացվում է վճռաբեկ դատարանի որոշման հիման վրա՝ վճռաբեկ դատարանի սահմանած ծավալով: Վարչական դատարանի վարչության օրենսգրքի նշված դրույթը դիտարկելով վճռաբեկ դատարանի՝ օրենքի միապետակ կիրառությունն ապահովելու սահմանադրական գործառույթի համապետություն, ակնհայտ է դառնում, որ վարչական դատարանը գործի նոր քննության ընթացքում ըստ էության կաշկանդված է վճռաբեկ դատարանի՝ վերոհիշյալ վիճարկվող դրույթների կիրառելիության վերաբերյալ իրավական դիրքորոշմամբ:

Բացի դրանից, «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 71 հոդվածի 5-րդ մասին համապատասխան սահմանադրական դատարանին ուղղված դիմումում դատարանը, ի թիվս այլոց, պետք է հիմնավորի այն հանգամանքը, որ այդ գործի լուծումը կարող է իրականացվել միայն վիճարկվող դրույթի կիրառմամբ: Տվյալ դեպքում սահմանադրական դատարանին ուղղված դիմումում նշված պահանջը ոչ միայն բավարարված չէ, այլ նաև, ինչպես նշվեց, «Նայաստանի Նանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՏՏ օրենքը եւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՏՏ օրենքը գործի նոր քննության համար կիրառելի չեն, իսկ դիմող կողմի հարցադրումները փոխառված օրենքների առնչությամբ դուրս են գալիս նորմատիվ բնույթ ունեցող իրավական ակտի դրույթի/դրույթների սահմանադրականության գնահատման շրջանակներից:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը ՏՏ քրեական դատարանի օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետին անդրադառնում է ոչ թե վիճարկվող նորմերի բովանդակության սահմանադրականության փաստակցումից, այլ բարձրացնում է օրենսդրական բացի խնդիր: Չնայած այն հանգամանքին, որ դիմումում անհրաժեշտ չափով հաշվի չեն առնվել «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 71 հոդվածի 5-րդ մասի պահանջները, այդուամենայնիվ, դիմողը գտնում է, որ ՏՏ քրեական դատարանի օրենսգրքի ՏՏ Սահմանադրության 83.5. հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան բավարար հարակույթյամբ չի սահմանել քրեական գործի շրջանակներում ստուգումների իրականացման դեպքերը, պայմանները եւ կարգը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի փաստարկները չեն վկայում վիճարկվող դրույթի անորոշության կամ ոչ իրավաչափ լինելու մասին: Տվյալ դրույթը կոչված է կարգավորելու քննիչի՝ որպես քրեական դատավարության մասնակցի եւ քրեական գործի նախաքննության շրջանակներում դրա բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ քննության համար լիազորված եւ պարասխանատու պաշտոնատար անձի լիազորությունը՝ **վերստուգումներ, գույքագրումներ, այլ ստուգողական գործողությունների** կատարում պահանջելու վերաբերյալ, որպիսիք քննիչի գնահատմամբ կոնկրետ գործով կարող են անհրաժեշտ քննչական գործողություններ հանդիսանալ՝ քրեական գործով օբյեկտիվ ճշմարտության բացահայտմամբ պայմանավորված խնդիրներ լուծելու համար (ապացուցման ենթակա հանգամանքների պարզում, ապացույցների ձեռքբերում, դրանց գնահատում եւ այլն): Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննիչին օրենքով եւ վիճարկվող վերոհիշյալ նորմով այդպիսի լիազորություն վերապահելն իրավաչափ է, համապատասխանում է նրա գործառույթներին եւ ինքնին սահմանադրականության խնդիր չի հարուցում:

Արձանագրելով, որ քրեական գործի նախաքննության շրջանակներում ինչպես քննչական ցանկացած այլ գործողության, այնպես էլ վերստուգումների, գույքագրումների եւ այլ ստուգողական գործողությունների կատարումն օբյեկտիվորեն կարող է առնչվել անձանց իրավունքների եւ ազատությունների պահպանման խնդրին, սահմանադրական դատարանը գտնում է, որ լրացուցիչ օրենսդրական կարգավորման են ենթակա այդպիսի գործողությունների կատարման պայմանները (հիմքերը, համապատասխան որոշման կայացման կարգն ու պայմանները) եւ կարգը (այդ թվում՝ արդյունքների արձանագրման), եւ այս առումով հիմնավոր են դիմողի հարցադրումները: Սակայն չի կարող ստուգումների՝ «Նայաստանի Նանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՏՏ օրենքով սահմանված ընդհանուր կարգը մեխանիկորեն փարածվել քրեադատավարական գործընթացների վրա՝ առանց հաշվի առնելու դրանց առանձնահատկությունները, անձանց իրավունքների իրացման ու պաշտպանության երաշխիքների ապահովումը, մյուս կողմից՝ խոչընդոտներ ստեղծել պետական իշխանության մարմինների գործառույթների լիարժեք իրականացման համար: Այս խնդիրը, ինչպես նշվեց, լրացուցիչ իրավակարգավորման առարկա է, այլ ոչ թե Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 71 հոդվածի հիմքով օրենքի փվյալ կոնկրետ վիճարկվող դրույթի սահմանադրականության խնդիր:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով ՆՏ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով, 102 հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 60 հոդվածի 1-ին կետով, 63, 64 եւ 71 հոդվածներով, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՆՏ վարչական դատարանի դիմումի հիման վրա գործի վարույթը՝ «Նայասարանի Նանրապետությունում սպուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՏ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասի, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՆՏ օրենքի 2 հոդվածի 4-րդ մասի՝ իրավակիրառ պրակտիկայում փրված մեկնաբանմամբ, մատով, կարճել:

2. ՆՏ քրեական դատավարության օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը համապատասխանում է Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը:

3. Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

27 հոկտեմբերի 2009 թվականի
ՍԴՈ- 836